ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ
0002, Երևան, Պուշկինի փող. 56ա, հեռ. 53 02 62, ֆաքս 53 88 42
ombuds@ombuds.am, www.pashtpan.am

№01/13.4/5098-15
«14» 10 2015թ.

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի
Վանաձորի գրասենյակ» հասարակական
կազմակերպության նախագահ
պարոն Ա. Սաքունցին
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59

Հարգելի՛ պարոն Սաքունց,

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրված Ձեր դիմումի կապակցությամբ հայտնում ենք, որ ՀՀ Ազգային ժողովի 2015 թվականի հոկտեմբերի 5-ի ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը հանրաքվեի դնելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին որոշման (այսուհետ՝ ԱԺ որոշում)՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու հարցը որոշելու վերաբերյալ մեր կողմից կատարվել են համապատասխան ուսումնասիրություններ, որի արդյունքները ներկայացված են ստորև.

Ձեր դիմումով խնդրահարույց է գնահատվել ԱԺ որոշումը, քանի որ դրանով հանրաքվեի դրվող ՀՀ Սահմանադրության փոփոխությունների նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ) պարունակում է մարդու և քաղաքացու որոշ իրավունքների, ազատությունների սահմանափակում և նրանց իրականացումն ապահովող սահմանադրական երաշխիքների վերացում, և ըստ այդմ, նշել եք, որ այն չի կարող դրվել հանրաքվեի («Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» ենթակետ):

Այնինչ, ԱԺ որոշմամբ ՀՀ Ազգային ժողովը համաձայնություն է տալիս, որպեսզի Նախագիծը դրվի հանրաքվեի, այսինքն, ԱԺ որոշման ուժի մեջ մտնելու արդյունքում առաջացած իրավական հետևանքը սահմանափակվում է միայն՝ քաղաքացիների համար հանրաքվեին մասնակցելու հնարավորություն ընձեռելով: Հետևաբար, ԱԺ որոշումն ինքնին

Իրավական վերլուծության վարչություն
Հեռ.՝ 53-76-34

ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխով սահմանված մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների ուղղակի սահմանափակում չի պարունակում:

Ավելին, Ձեր կողմից ըստ էության բարձրացվում է ԱԺ որոշման և «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքի միջև համապատասխանության հարցը: Մինչդեռ, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը Սահմանադրական դատարան կարող է դիմել, այդ թվում, ՀՀ Ազգային ժողովի որոշումների՝ Սահմանադրության 2-րդ գլխի դրույթներին համապատասխանության հարցերով (ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ):

Ուստի, Ձեր դիմումում առկա չէ ԱԺ որոշման ՀՀ Սահմանադրությանը համապատասխանելու խնդիր, որը համապատասխան իրավական հիմքերի առկայության դեպքում Պաշտպանը կկարողանար վիճարկել ՀՀ սահմանադրական դատարանում: Ելնելով վերոգրյալից՝ ըստ օրենքի ԱԺ որոշման սահմանադրականությունը ՀՀ Սահմանադրական դատարանում վիճարկելու հիմքերը բավարար չեն:

Հարգանքով՝

Կ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

Իրավական վերլուծության վարչություն
Հեռ.՝ 53-76-34